

---

---

ՄՈՍԿՎԱՅԻ 1921 թ. ՄԱՐՏԻ 16-Ի ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.

*XXI դարասկզբում, հաղթանակած ու վրիպած հեղափոխություններ ու հեղաշրջումներ, բռնապետական վարչակարգեր, ավերիչ պատերազմներ և ցեղասպանություններ, դիվանագիտական խարդավանքներ և մեծածավալ կեղծարարություններ տեսած և այդ ամենից հոգնած հայ հասարակական միտքն այլևս ոչ մի հավատ չպետք է տածի ավանդական դիվանագիտությանը և հայ ժողովրդի «փրկության» վերաբերյալ «մեծ» դիվանագետների մատուցած, մատուցվող ու մատուցվելիք ծրագրերին: Արդարության հաղթանակի վարդագույն երազներ փայփայող հայ հասարակական-քաղաքական մտքի շատ թե քիչ խոհուն ներկայացուցիչները գոնե XXI դարասկզբին պետք է համոզվեն, որ ավելորդ են աղերսանքներն ու բարոյական քարոզներն այնտեղ, որտեղ ազգային հարցի լուծման իրական կշռաչափերը աշխարհի հզորների պրագմատիկ շահերն են: Այս տեսակետից հատկանշական է 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված խորհրդա-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին», ըստ ամենայնի, հակահայկական պայմանագիրը: Արդ՝ ծանոթանանք պայմանագրի նախապատմությանը:*

*1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում պայմանագիր ստորագրվեց Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ինչպես նաև Օսմանյան կայսրության դեմ պատերազմած ուրիշ երկրների և սուլթանական Թուրքիայի միջև: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը գլխավորում էր խորհրդարանի նախագահ Ավետիս Ահարոնյանը, որը ևս դնում է իր ստորագրությունը պայմանագրի տակ: Սևրի պայմանագրով մասնավորապես գծվեցին Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանները, որոնց վերջնական որոշումը վստահվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին: Դրանից քիչ առաջ վերջինս միջնորդական որոշում էր ընդունել Հայաստանի կազմի մեջ մտցնել նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի վիլայեթները, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների մի մասը: Սակայն փլուզվող Թուրքիայի անունից պայմանագիրը ստորագրեցին Ստամբուլում գտնվող սուլթանական կառավարության ներկայացուցիչները: Մինչդեռ Անկարայում իմպերիալիստական անդամահատումից երկրի փրկության նշանաբանով ապստամբություն բարձրացրած նախկին երիտթուրք, գեներալ Մ. Քեմալը՝ իր կողմնակիցներով, 1920 թ. մարտին Ստամբուլը անգլիական զորքերի կողմից գրավելուց հետո, իրենց միակ օրինական իշխանություն համարեցին Թուրքիայում՝ ամիսներ անց կտրականապես մերժելով Սևրի հաշտության պայմանները: 1920 թ. ապրիլից քեմալականները սերտ կապեր հաստատեցին Խորհրդային Ռուսաստանի հետ՝ միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարի նույն կարգախոսով ընդհանուր պլատֆորմ գտնելով և իրենց ներկայացնելով որպես*

մուսուլմանական Արևելքում պրոլետարական-սոցիալիստական հեղափոխության կրողներ: «Ազգային-ազատագրական» քեմալական շարժումը ժառանգել էր երիտթուրքերի նվաճողական քաղաքականության գաղափարական ծրագիրը՝ շովինիզմը և արկածախնդրությունը: Թուրք ազգն առանձնացնելով որպես բազմազգ պետության էլիտա՝ Մ. Քեմալը հայտարարում է, որ «թուրքն օժտված է մեծ ու բարձր հատկանիշներով»: Հարկավ, սա չիսանգարեց, որպեսզի «համաշխարհային հեղափոխության հաղթանակի» կարգախոսով առաջնորդվող Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը պաշտպան կանգնի քեմալական շարժմանը՝ այն համարելով միջազգային իմպերիալիզմի դեմ Արևելքի ճնշված ժողովուրդների պայքարի դրոշակակիր:

1920 թ. ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը Մ. Քեմալի ստորագրությամբ նամակ ուղարկեց Ռուսաստանի Ժողկոմխորհի նախագահ Վ. Ի. Լենինին, որտեղ ցանկություն էր հայտնվում երկու երկրների միջև մշտական հարաբերություններ հաստատել և միացյալ պայքար մղել իմպերիալիստների դեմ: Քեմալը Խորհրդային Ռուսաստանից խնդրում էր որպես «առաջին օգնություն» Թուրքիային տրամադրել 5 մլն. թուրքական լիրայի արժեքով ոսկի, զենք և զինամթերք, ռազմատեխնիկական միջոցներ, սանիտարական նյութեր և պարեն: Նամակում շարադրված էին նաև Անկարա-յի կառավարության արտաքին քաղաքականության հետևյալ սկզբունքները. 1) Թուրքիան անկախ է, 2) թուրքական պետության մեջ են մտնում անվիճելիորեն թուրքական տարածքները, 3) Արաբիան և Սիրիան հռչակվում են անկախ պետություններ, 4) Ազգային մեծ ժողովն ընդունում է մի որոշում, որով թուրքական Հայաստանին, Քրդստանին, Լազիստանին, Բաթումի մարզին, Արևելյան Թրակիային և թուրք-արաբական խառն բնակչությամբ տարածքներին տրվում է սեփական ճակատագիրը որոշելու իրավունք, 5) թուրքական նոր պետության մեջ ճանաչվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, 6) նեղուցների հարցը հանձնվում է սևծովյան պետությունների կոնֆերանսին, 7) վերացվում են կապիտուլյացիաների ռեժիմը և օտարերկրյա պետությունների տնտեսական վերահսկողությունը, 8) վերացվում են օտարերկրյա ազդեցության ամեն տեսակի ոլորտները<sup>1</sup>: Դյուրին է նկատել, որ նամակում բերված բոլոր սկզբունքները ընդունելի էին Խորհրդային Ռուսաստանի համար. օտարերկրյա պետությունների նկատմամբ քեմալական կառավարության վերաբերմունքը Թուրքիային շատ բանով ուղղակի մոտեցնում էր իմպերիալիստական պետությունների հետ թշնամական հակամարտության մեջ գտնվող Խորհրդային Ռուսաստանին: Բնական է՝ այստեղ մեզ առավել հետաքրքրողը նամակի այն մասն է, որը վերաբերում է Հայաստանին: Քեմալի նամակի համաձայն, Ազգային մեծ ժողովը Արևմտյան Հայաստանին տալու էր սեփական ճակատագիրը

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 447-448: Տե՛ս նաև Միմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 369-371:

որոշելու իրավունք: Բայց դա խաբեություն էր, քանզի քեմալականներն իրենց «Ազգային ուխտի» մեջ Արևմտյան Հայաստանն արդեն հայտարարել էին Թուրքիայի անբաժանելի մաս: Տեսնելով բոլշևիկյան Ռուսաստանի «բարի կամքի» դրսևորումը՝ Անկարան մի քանի օր անց Մոսկվա է հղում հետևյալ տողերը բովանդակող նամակը. «Եթե խորհրդային ուժերը մտադիր են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով իրենց ազդեցության միջոցով Վրաստանին հարկադրել մտնելու միության մեջ և ձեռնարկել անգլիացիների արտաքուսմը Կովկասի տարածքից, թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ...»<sup>2</sup>: Չնայած Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի Հանրապետությանը պաշտպանության տակ առնելու հավաստիացումներ էր անում, սակայն նաև խստորեն պահանջում էր, որ Հայաստանը հրաժարվի Սևրի պայմանագրից: Ավելին, նա տնտեսական և ռազմական օգնություն էր ցույց տալիս Հայաստանի դեմ ռազմատենչ հայտարարություններով հանդես եկող և պատերազմի նախապատրաստվող «նոր Թուրքիայի» առաջնորդին: Հայաստանի Հանրապետության դեմ բոլշևիկյան «բոցաշունչ» հայտարարություններով հանդես էին գալիս ապրիլի վերջին խորհրդայնացված Ադրբեջանի ղեկավարները: Արդի քաղաքագիտության և պատմագիտության տեսանկյունից ոչ մի էմպիրիկ մտածող կամ տեսաբան չի կարող երկմտել, որ Խորհրդային Ռուսաստանի, հատկապես արևելյան քաղաքականության հիմքերը պետք է փնտրել «համաշխարհային հեղափոխության հաղթանակի» ապահովման սին տեսության մեջ, թեկուզ այն տեղի ունենար ժողովուրդների, տվյալ դեպքում հայ ժողովրդի, կենսական շահերի ոտնահարման, նրա հայրենիքի առուծախի գնով: Հայաստանը ֆիզիկապես ոչնչացնելու կոչեր հնչեցին 1920 թ. սեպտեմբերի 1-7-ին Բաքվում տեղի ունեցած՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Համագումարին մասնակցում և նրա աշխատանքներին անհրաժեշտ ընթացք էին տալիս ՌԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավար աշխատողներ Զինովևը, Կամենևը և Ռադեկը: Ոգեշնչված համագումարի ամբիոնից հայության հասցեին հնչած սպառնալիքներից և «իմպերիալիստական Հայաստանը ոչնչացնելու» կոչերից, համոզված, որ Հայաստանի Հանրապետությունը մենակ է քեմալականների դիմաց՝ Խորհրդային Ռուսաստանից մեծ չափերի զենք ու զինամթերք, ֆինանսական հսկայական միջոցներ ստացած «նոր Թուրքիան» 1920 թ. սեպտեմբերի վերջերին պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ: Հարձակվելով Հայաստանի վրա՝ Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը անթաքույց հայտարարեց, որ իր նպատակն է վերջին մահացու հարվածը հասցնել հայ ժողովրդին, իսկ Մ. Քեմալն էլ պնդեց, թե՛ այդ պատերազմի նպատակն է «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական

<sup>2</sup> Архив внешней политики (АВП) РФ, ф. 132, оп. 3, п. 2, д. 1, л. 11.

պետությունը...»<sup>3</sup>:

Հայկական գործերը թուրքական բանակի ներխուժման առաջին իսկ օրը բռնեցին նահանջի ճանապարհը, իսկ պատերազմի չորրորդ օրը թշնամին գրավեց Մարիդամիշը և Կադավանը: Հետագա օրերին հայկական բանակը շարունակեց կրել ծանր պարտություններ: Պատճառները շատ էին: Հայոց ոչ բոլոր զորամասերն էին զինված ու հանդերձավորված անհրաժեշտ չափով: Իրենց «փոքր դաշնակցին» Անտանտի պետություններն օգնում էին գործածությունից դուրս եկած զենքերով ու հնացած հանդերձանքով: Միայլ կլինե՞ր կարծել, սակայն, թե հայկական բանակն ընդհանրապես ի վիճակի չէր դիմադրելու թուրքերին: Ավելի քան 40-հազարանոց բանակում բազմաթիվ էին Առաջին համաշխարհային պատերազմի մարտերում կոփված կադրային ռազմիկները, որոնցից շատերը պարզևատրված էին Գեորգյան խաչերով և այլ պարգևներով: Հայոց գործում կային ռուսական զինվորական ծառայություն անցած մեկ տասնյակ զեներալներ, 1400-ից ավելի բարձրաստիճան սպաներ, շտաբայիններ, ինտենդանտներ և գործերի այլ տեսակների հրամանատարներ: Իր սպառազինությունների մեջ բանակն ուներ ռուսական և անգլիական հեռահար թնդանոթներ, հեծելազորային զորամասեր, գրահագնացքներ, գնդացրային ջոկեր, կապի և սակրավոր վաշտեր: Այսինքն, չի կարելի ասել, թե հայկական բանակը մարտունակ չէր: Իրողությունն այն էր, որ այդ բանակը չէր կոփվում այնպես, ինչպես կարող էր կոփել<sup>4</sup>: Հայկական բանակը ներսից քայքայելու համար քեմալականները մեծ աշխատանք էին ծավալել: Թուրքերը գործի դրեցին իրենց խորամանկության նոր զենքերից մեկը՝ քեմալական կեղծ կոմունիստական կուսակցությունը: Հայկական գործի մեջ քեմալական գործակալները քարոզչություն էին մղում, լուրեր տարածում, թե թուրք զինվորները «նույնպես բոլշևիկներ են»: Կոմունարկաների վրա դրոշմելով կարմիր կիսալուսին և հնգաթև աստղ<sup>5</sup>, նաև կարմիր դրոշակներ պարզելով՝ թուրքական կեղծ կոմունիստները հայկական գործի զինվորներին կոչ էին անում «լինել ինտերնացիոնալիստներ», չդիմադրել թուրքերին, չենթարկվել սեփական հրամանատարներին: Հայ զինվորների մեջ արձագանք էր գտնում քեմալականների տարածած այն ստահոդ քարոզչությունը, թե «հեղափոխական թուրքերը» հաշիվներ ունեն միայն դաշնակների հետ, և որ, եթե վերջիններս զրկվեն իշխանությունից, ապա «թուրք եղբայրները» բոլոր պայմանները կստեղծեն, որպեսզի ժողովուրդը ապրի նոր ու երջանիկ կյանքով:

Հայաստանի պարտությունն արագացնում էին նաև հայ բոլշևիկները: 1920 թ. հունիսին Բաքվում ստեղծված հայ կոմկուսի ղեկավար կազմը, ըստ էության, Ադրբեջանի կառավարության ձեռքին դարձել էր կույր գործիք և հլու կատարում էր նրա հանձնարարականները, որոնք ուղղված էին Հայաստանի Հանրապետության

<sup>3</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1932, с. 102.

<sup>4</sup> Տե՛ս Սիմոնյան Հր. Ռ., նշվ. աշխ., էջ 399:

<sup>5</sup> Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Ե., 1960, էջ 397:

ոչնչացմանը: Եթե Նարիման Նարիմանովի գլխավորությամբ Ադրբեջանի բոլշևիկ դեկավարները խորհրդային նորաստեղծ կարգերն օգտագործում էին Հայաստանի տարածքները գավթելու միջոցով «լուծելու իրենց ազգային խնդիրները» և այդ ուղղությամբ, ըստ էության, շարունակում էին մուսավաթականների քաղաքականությունը, ապա հայ բոլշևիկ երևելիները միանգամայն այլ մտածելակերպ և գործելակերպ որդեգրեցին: Նրանց մեծամասնությունը մոլեռանդ անհանդուրժողականություն էր հանդես բերում Հայաստանի կառավարության նկատմամբ: Հայաստանում իշխանությանը ամեն կերպ տիրանալու տենդով լի, նրանք թուրք-հայկական պատերազմի ամենաճանր օրերին իսկ, սեփական ազգի ներսում շարունակում էին դասակարգային անհաշտ պայքարի կոչեր անել, թուրք նվաճողների գործը դյուրացնելու համար հայոց գորքին և հանրապետության աշխատավորներին հորդորում էին չդիմադրել թշնամուն, որպեսզի նա կարողանա, որքան հնարավոր է, շուտ տապալել դաշնակների տիրապետությունը: «Որքան էլ զարմանալի է, - գրում է Հր. Միմոնյանը, - թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում հայ բոլշևիկ գործիչներից և ոչ մեկը հանդես չեկավ թուրքերին դիմադրելու և հայրենիքը պաշտպանելու սեփական ժողովրդին ուղղած որևէ կոչով»<sup>6</sup>: Ստեղծվել էր այնպիսի կացություն, երբ ռազմաճակատի շատ հատվածներում զինվորները լքում էին դիրքերը, շարտում էին հրացանները, «թուրք եղբայրների» առջև բացում ռազմական ամրոցների դարպասները, հանձնվում քեմալական թիկնոց հագած «գորշ գայլի» ողորմաձությանը: 1918 թ. մայիսին, ընդամենը 2,5 տարի առաջ, Մարդարապատի հերոսական ճակատամարտը հաղթականորեն վարած հրամանատարներ Դանիել բեկ Փիրումյանը, Միլիկովը և մյուսներն անգոր էին կասեցնելու իրենց գլխավորած զորքերի կազմալուծման կործանարար վայրընթացը: Հայկական բանակի կադրային սպաներից ոմանք, ցնցված այդ բոլորից, իրենց կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ<sup>7</sup>:

Ամենաողբերգականը թուրք-հայկական պատերազմում 1920 թ. հոկտեմբերի 30-ին, գրեթե առանց կրակոցի, Կարսի անատիկ բերդի հանձնումն էր թշնամուն: Բերդին տիրելուց հետո քեմալականներն ամբողջ երկու շաբաթ զբաղվում են քաղաքի և շրջակա գյուղերի հայերին կոտորելով: Գրավելով Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը՝ թուրքերը սրի քաշեցին 60 հազար հայի, կողոպտեցին բնակչության ողջ ունեցվածքը: Միայն Ադրուաղի և Ջաջուռի շրջաններում 1921 թ. գտնվել է 12 հազար դիակ, որոնց 80 տոկոսը՝ մինչև 12 տարեկան երեխաներ: Ոչ լրիվ տվյալներով, թուրքերի գրաված շրջաններում հայ զոհերի թիվը հասել է 198 հազարի<sup>8</sup>:

1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին խորհրդային կարգեր հաստատվեցին Հայաստանի Հանրապետության այն տարածքում, որը զերծ էր մնացել թուրքական նվաճումից: Մակայն հանրապետությունում իշխանությունը կորցրած նախկին կառավարության

<sup>6</sup> Միմոնյան Հր. Ռ., նշվ. աշխ., էջ 401:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> **St u** Советская историческая энциклопедия, т. I, М., 1961, с. 753.

ներկայացուցիչները 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում պայմանագիր կնքեցին քեմալականների հետ, որով Թուրքիան Հայաստանից բռնազավթում էր Կարսն ու Արդահանը, որոնք 1878 թ. Ռուսական կայսրության մասն էին կազմում, Կադզվանի, Օլթիի, Արդվինի օկրուգները, Սուրմալուի գավառը՝ Բգդիթ քաղաքով, հայ ժողովրդի գոյության խորհրդանիշ Արարատ լեռը ներառյալ: Այդ պայմանագրով՝ Թուրքիան Հայաստանից անջատեց նաև նրա հենց կենտրոնում գտնվող Նախիջևանի, Շարուրի և Շահթախտի շրջանները: Մնացյալ Հայաստանի ներքին կյանքը և արտաքին հարաբերությունները ենթարկվում էին քեմալական պետության վերահսկողությանը: Այդ պայմանագիրն իրավական ուժ չունեք, որովհետև իշխանությունն իրականում բոլշևիկների ձեռքում էր: Սակայն ստեղծված իրողության հետ չէին կարողանում հաշտվել իրենց կառավարման տարիներին ներքին ու արտաքին քաղաքականության մեջ ճակատագրական սխալներ գործած դաշնակցական ջոջերը: Նրանք 1921 թ. փետրվարի 18-ին ապստամբություն (ավելի ճիշտ՝ խռովություն) բարձրացրին խորհրդային իշխանության դեմ: Ապրստամբները գրավեցին Երևանը և հանրապետության մի շարք շրջաններ: Ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Միմոն Վրացյանի գլխավորությամբ: Անհրաժեշտ չհամարելով խոսել ապստամբության պատճառների մասին՝ նշենք միայն, որ հայությունն ընկավ մի նոր, լրացուցիչ ծանր ու դժվարին կացության մեջ: Իշխանությունը վերականգնելու մոլուցքով տարված նախկին կառավարողները պատրաստ եղան գնալու ամեն ստորության: Թուրքիայի Ազգային մեծ ժողովին հղած հեռագրում 1921 թ. մարտի 15-ին Միմոն Վրացյանը գրում էր, որ իր «կառավարությունը Տաճկաստանի և Հայաստանի միջև միջազգային նորմալ և բարեկամական հարաբերություններ ստեղծելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպված են անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված հայ-տաճկական դաշնագրի մեջ, և հետագային ստեղծված իրական պայմանները»<sup>9</sup>: Երեք օր հետո Ս. Վրացյանը Երևանում թուրքական արևելյան ճակատի հրամանատարության ներկայացուցիչ Բեհաեդդինի միջոցով Թուրքիայի Ազգային մեծ ժողովին է հղում նոր դիմում, որով խնդրում է. «1. – Վերադարձնել Երևանի ռազմաճակատում գտնվող հայ զինվորական զերիներին: 2. – Տալ որոշ պայմանով հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացանի կամ տաճկական մատուցերի փամփուշտներ և կամ ռուս ու լեբել սիստեմի հրացաններ: 3. – Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր գտնո՞ւմ է հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն և, եթե կարող է, ի՞նչ չափով ու եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում»<sup>10</sup>: Ս. Վրացյանը դիմումը եզրափակում է այսպես. «Սույն դիմումը անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական

<sup>9</sup> Վրացյան Ս., Կյանքի ուղիներով, հ. 2, Բեյրութ, 1967, էջ 66-67:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 68:

հարաբերությունների վրա, որոնց հիմքն է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած և որոնք խանգարված էին բոլշևիկների իշխանության ժամանակ»<sup>11</sup>:

Սակայն քեմալականների հետ մերձենալու վրացյանների այս քայլերն այլևս օգուտ տալ չէին կարող: Ադրբեջանա-թուրքական ամուր գործակցությունը և այդ դաշնակցության նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի կառավարության վերաբերմունքը նախապես ամեն ինչ վճռել էին արդեն: Լոկ մնում էր թուրք-հայկական պատերազմի արդյունքներն ամփոփել, այսինքն՝ թուրքերի կողմից հայկական հողերի գավթումն «օրինականացնել»: Հենց այդ նպատակին էր միտված 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Մոսկվայում տեղի ունեցած խորհրդա-թուրքական կոնֆերանսը, որն իր աշխատանքը սկսեց փետրվարի 26-ին: Բոլորովին անսպասելի չէր, որ Խորհրդային Հայաստանի կառավարության որևէ ներկայացուցչի չթույլատրեցին մասնակցել բանակցություններին՝ չնայած խնդիրը վերաբերում էր Հայաստանի տարածքներին, հայության ճակատագրին: Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Բեկզադյանի գլխավորած պատվիրակությունը կոնֆերանսին մասնակցելու հրավեր չստացավ: Ուշագրավ է կոնֆերանսի վերջին օրերին, մարտի 12-ին, «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանի՝ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին հղած հեռագիրը, որտեղ ասվում էր, թե քանի որ Հայաստանում արդեն տապալված է խորհրդային իշխանությունը, Ալ. Բեկզադյանն այլևս լիազորված չէ կոնֆերանսում ներկայացնելու հանրապետությունը<sup>12</sup>: Հենց այդ էլ ուզում էին բանակցող կողմերը: Հատկապես թուրքական կողմը Վրացյանի հեռագիրն օգտագործեց, որպեսզի էլ ավելի համառորեն պնդի հայերին կոնֆերանս չթողնելու իր տեսակետը: Հարկավ, միամտություն կլինի կարծել, որ եթե չլինեք այդ հեռագիրը, ամեն ինչ բարեհաջող կավարտվեր Հայաստանի համար:

Չպետք է շրջանցել նաև հետևյալ իրողությունները. առաջին՝ քեմալականները մտադրություն չունեին Հայաստանից գավթած հողերից մի թիզ անգամ վերադարձնելու տիրոջը: Երկրորդ՝ Արևելքում Խորհրդային Ռուսաստանի շահերը պահանջում էին շատ բարդություններ չստեղծել իմպերիալիզմի դեմ պայքարող «հեղափոխական» Թուրքիայի հետ հարաբերություններում: Կոնֆերանսի ընթացքում թուրքական պատվիրակությունը շարունակ ակնարկում էր, որ թուրքական տարածքային պահանջներին չընդատաջելու դեպքում իր երկիրը կշրջադարձվի Անտանտի կողմը: Եվ քեմալականների խոսքի ու գործի մեջ չկար խզում: Այն օրերին, երբ Մոսկվայում ընթանում էին բանակցությունները, այդ նույն ժամանակ քեմալական մեկ այլ պատվիրակություն Լոնդոնում բանակցում էր անգլիական կառավարության հետ: Լենինի «հավատարիմ զինակիցը» առիթը բաց չէր թողնում անգլիացիներին համոզելու, թե Թուրքիան կարող է պատվար դառնալ Խորհրդային Ռուսաստանի դեմ:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 70:

Ավելին, ոչ միայն քեմալականներն էին ծավալուն գործունեություն սկսել Անտանտի երկրներին մերձենալու համար, այլև Անկարայի կառավարության հանձնարարությամբ՝ նույն խնդրին լծվել էին Եվրոպայում ապաստանած իթթիհատական հայտնի գործիչները: Այսպես, 1921 թ. փետրվարին Թալեաթը, Բեռլինից գալով Ժնև, տեսակցություն էր ունեցել անգլիական մի դիվանագետի հետ, որին քեմալականների անունից հավաստիացրել էր, որ «նոր Թուրքիայի» կառավարողները Անտանտի երկրների հանդեպ տածում են քաղաքական անկեղծ համակրանք: Այդ նույն ժամանակ եռանդուն պանթուրքական քարոզչություն էր մղում Բեռլինում ապաստանած իթթիհատական գործիչ, ապա քեմալական գույն ստացած Իդրիս բեյը, որը մեկնում էր Անտանտի երկրներ, ամենուր կոչեր անում շարունակել անհաշտ պայքարը: Երբ Մոսկվայում տեղի էր ունենում խորհրդա-թուրքական կոնֆերանսը, Իդրիս բեյը Բեռլինում, հայոց ցեղասպանության արյունարբու դահիճ Թալեաթի հուղարկավորության ժամանակ հանդես գալով դամբանական ճառով, կոչ էր անում շարունակել պայքարը «մուսուլմանների բնական թշնամու»՝ Ռուսաստանի դեմ, հետևողականորեն շարունակել «մեծ թուրք Թալեաթի» գործը, որը շարունակում էն «նոր Թուրքիայի» ղեկավարները՝ Մ. Քեմալի առաջնորդությամբ: Ահա այսպիսի պայմաններում է, որ Մոսկվայի խորհրդա-թուրքական կոնֆերանսի վերջին օրը՝ 1921 թ. մարտի 16-ին, Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի կառավարական պատվիրակություններն ստորագրեցին «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Այդ օրը հայ ժողովրդի պատմության ամենից տխուր էջերից է: Պայմանագիրը Խորհրդային Ռուսաստանի կողմից ստորագրեցին արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը և Կենտգործկոմի անդամ Ջելալ-էդդին Կորկմաստվը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից՝ Թուրքիայի ժողովրդական տնտեսության ժողովրդական կոմիսար Յուսուփ Քեմալը, թուրք քաղաքական գործիչ Ռիզա Նուր բեյը և Ալի Ֆուադ փաշան:

Պայմանագիրը «նոր Թուրքիայի» դիվանագիտական հաղթանակն էր, քանզի քեմալականներն իրենց «Ազգային ուխտի» մեջ Արևմտյան Հայաստանն արդեն հայտարարել էին թուրքական պետության անբաժանելի մասը: Մոսկվայի պայմանագիրը ոչ միայն ամրագրեց այդ իրողությունը, այլև վավերացրեց 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ թուրքերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքների գավթումը: Թուրքիային էին հանձնվում Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Կադզվանի, Արդահանի, Օլթիի օկրուգները և ուրիշ տարածքներ՝ 19.215 քառ. կիլոմետր<sup>13</sup>: Քեմալականների համար շատ կարևոր էր նաև Նախիջևանի մարզը հայերից գավթելը: Քեմալականները բանակցությունների ընթացքում արդեն համոզվել էին, որ Ռուսաստանը չի համաձայնի այդ տարածքը Թուրքիային անցնելուն՝ գլխավորապես նրա ռազմավարական դիրքից ելնելով:

<sup>13</sup> **Տե՛ս** Бюллетень Центрального статистического управления, 1921, N 5, с. 10. **Завриев Д. С.** Восточная Анатолия. Экономические очерки, Тифлис, 1936, с. 8.



Նախիջևանը պանթուրքիզմի տեսակետից առանձնակի կարևորություն ուներ: Ըստ էության, այդ տարածքը կապող օղակ էր Թուրքիայի և Ադրբեջանի, Թուրքիայի և մյուս թուրքալեզու ազգերի միջև: Նախիջևանը հայերից վերցնելը պանթուրքիստների համար ձեռք էր բերում առաջնային նշանակություն:

Շատ լավ զգալով Խորհրդային Ռուսաստանի կառավարության բարյացակամ դիրքը՝ թուրքական կողմն ամեն ինչ արեց մարզը իր «կրտսեր եղբորը»՝ Խորհրդային Ադրբեջանին հանձնելու համար: Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով՝ Նախիջևանի մարզը, որը գտնվում է Արարատյան աշխարհի հենց կենտրոնում, խլվեց Խորհրդային Հայաստանից և դրվեց Խորհրդային Ադրբեջանի խնամակալության տակ, մի խոսքով՝ բռնակցվեց նրան: Պայմանագրում այդ հոդվածն ամրագրվեց այս տեսքով՝ «Հոդված 3. Երկու Պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ սույն Պայմանագրի 1-ին (C) հավելվածում նշված սահմաններում կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության...»<sup>14</sup>: Սակայն թուրքական կողմը դրանով չբավարարվեց: Շարուր-Դարալագյազի գավառից անջատվեց Շարուրի ամբողջ տարածքը և միակցվեց Նախիջևանին: Այլ խոսքով, պայմանագրով Հայաստանից պոկվեց ևս 5,5 քառ. կմ տարածք: Այսպիսով, Մոսկվայի 1921 թ. պայմանագրով, Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազար քառ.կմ տարածություն: Անցողակի նշենք, որ դրանից հետո Թուրքիային անհրաժեշտ եղավ 10 տարուց ավելի զանազան դիվանագիտական միջոցների դիմել, որպեսզի անմիջական տարածքային կապ հաստատի արդեն Ադրբեջանի ինքնավար հանրապետություն դարձած Նախիջևանի հետ: Եվ դա ի վերջո նրան հաջողվեց: 1932 թ. հունվարի 23-ին Երանի և Թուրքիայի միջև կնքվեց հատուկ համաձայնություն, որով երկու երկրները տարածքների փոխանակում կատարեցին Արարատ լեռան շրջանում: Նեղ մի շերտով Թուրքիան անմիջականորեն կապվեց Նախիջևանի հետ: Դրանով իրականացավ պանթուրքիստների վաղուց փայփայած ցանկությունը<sup>15</sup>: Մոսկվայի պայմանագրով հաստատվեց այն սահմանագիծը, որ գոյություն ունի մինչև այսօր: Այդ պայմանագիրը ստորագրելուց յոթ ամիս անց՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ, Թուրքիայի և Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունների միջև Կարսում կնքվեց ձևական պայմանագիր, որն, ըստ էության, Մոսկվայի պայմանագրի ծաղրանկարային ցուցադրանքը լինելով, որևէ փոփոխություն չմտցրեց ստեղծված սահմանների կարգի մեջ:

Քաղաքական-դիվանագիտական անբարո իսկահայկական գործելակերպի հաջորդ քայլը Խորհրդային Ռուսաստանի կողմից արվեց 1921 թ. հուլիսի 5-ին, երբ ՌԿ(Բ)Կ Անդրերկրկումի բյուրոն որոշում ընդունեց Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝

<sup>14</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972, էջ 501:

<sup>15</sup> **Տէ ւ** **Завриев Д. С.**, նշվ. աշխ., էջ 8:

նրան տալով ինքնավարություն: 1923 թ. հուլիսին Ադրբեջանական ԽՍՀ կազմում ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը՝ դարձյալ շրջանցելով հայության կարծիքը: Երկու դեպքում էլ կատարվածի հետևանքներն ամբողջ հայության վրա ծանրացած են առ այսօր: Խորհրդա-թուրքական 1921 թ. մարտյան պայմանագրից հետո, գրեթե շուրջ քառորդ դար Հայկական հարցը դուրս մնաց դիվանագիտական քննարկումներից: Այն դիվանագիտական խոսակցության առարկա դարձավ մեկ էլ Հայրենական մեծ պատերազմից հետո: 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը Բեռլինում (Պոտսդամում) տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած երեք մեծ տերությունների ղեկավարների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) խորհրդաժողովը, որը նվիրված էր հետպատերազմյան տարիներին սոցիալական տարբեր կարգեր ունեցող երկրների քաղաքական և ռազմական համագործակցության հարցերին: Համաժողովին մասնակցում էին Բ. Ստալինը, Հ. Տրումենը, Ու. Չերչիլը (հուլիսի 28-ից՝ Կ. Էսլին), արտաքին գործերի նախարարներ, փորձագետներ: Համաժողովի պաշտոնական բացումից մեկ օր առաջ, հուլիսի 16-ին, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովում Վ. Մոլոտովի և Անգլիայի արտաքին գործերի նախարար Ա. Բդենի միջև տեղի է ունենում զրույց, որի ընթացքում քննարկվում են երկու կարևոր հարց՝ ա) Բոսֆորի և Դարդանելի նեղուցների, բ) թուրքերի կողմից 1920 թ. բռնագրավված հայկական հողերի հարցերը: Զրույցի ժամանակ Վ. Մոլոտովը հատկապես ընդգծում է, որ 1921 թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ խորհրդային կառավարությունը բարձրացնում է Խորհրդային Միությանը օրինաբար պատկանող տարածքներն իրեն վերադարձնելու հարցը: Այնուհետև հայկական հողերի հարցին բուն հանձնաժողովն անդրադարձավ հուլիսի 22-ին: Մոլոտովը այստեղ ևս խոսում է հայկական հողերի նկատմամբ ԽՍՀՄ պահանջատիրության մասին<sup>16</sup>: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, հարցի քննարկումը ոչ մի էական արդյունք չի արձանագրում, քանզի ԱՄՆ-ը Թուրքիային արդեն վերցրել էր իր հովանավորության ներքո: Բայց մեզ հետաքրքրում է հարցի ոչ այնքան այդ կողմը, որքան այն, թե ինչպես էր խորհրդային կառավարությունը նենգափոխում 1920-1921 թթ. խորհրդա-թուրքական հարաբերությունների իրողությունը, այն պարզ իրողությունը, որ Մոսկվայի պայմանագիրը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հովերով տարված խորհրդային բոլշևիկների գործարքն էր «համաշխարհային իմպերիալիզմի դեմ» պայքարի դրոշ պարզած և երիտթուրքերի գործն անշեղ շարունակող քեմալականների հետ, որոնք իրենց զավթողական նպատակներին հասնելուց հետո Ռուսաստանին պիտի համարեին իրենց համար առաջին թշնամին: Այդ պայմանագիրը ոչ միայն անբարոյական էր իր հակահայկականությամբ, այլև չէր բխում Ռուսաստանի ազգային-պետական

<sup>16</sup> Советский Союз на международных конференциях. Сборник документов, т. VI, М., 1984, с. 135-136.

շահերից: Այս առումով ճիշտ է գրել մերօրյա ռուս պատմաբան Ալեքսանդր Իգոլկինը. «Մոսկվայի պայմանագիրը մի իրողություն է, որը լիովին դուրս է ռուս-թուրքական պատմության ամբողջ նախընթացից: Իր էությամբ դա ընդհանուր ոչինչ չունի Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված նախորդ բոլոր պայմանագրերի հետ, ինչպես մեզ համար հաղթական, այնպես էլ, պարտություն կրած պատերազմներից հետո (օրինակ՝ Ղրիմի պատերազմը): Նախկինում, ցանկացած իրադրությունում, ռուսական պետական գործիչները ղեկավարվում էին ռուսական պետական շահերով: 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը կնքվեց Լենինի կողմից՝ արհամարհելով Ռուսաստանի պետական շահախնդրությունները: Սակայն այդ պայմանագիրն ամբողջովին օրինաչափ էր բոլշևիկների համար, որոնք ծառայում էին ոչ թե Ռուսաստանին, այլ տեսիլքին, համաշխարհային հեղափոխության ուրվականին: Բայց եթե անգամ Մոսկվայի պայմանագիրը գնահատենք հենց իրենց՝ բոլշևիկների ընտրած չափանիշով, ապա այդ դեպքում ևս այն չի կարելի կոչել խոհեմության դրսևորում: Թուրքիան չդարձավ իմպերիալիզմի դեմ ազգային-ազատագրական պայքարի ավանգարդ: Քեմալական ղեկավարությունը, երբ լիակատար տիրեց իշխանությանը, ոչ մի բանում երևան չբերեց իր զինակցությունը Կոմինտերնին»<sup>17</sup>: Համաձայն ենք ռուս պատմաբանի՝ պատմականությունից բխող վերոհիշյալ բոլոր հարցադրումներին, քանզի դրանք բացահայտում են Թուրքիային տարածքներ հանձնելու խորհրդային կառավարության անհիմն պատճառաբանությունը՝ երիտասարդ Խորհրդային Ռուսաստանի թուլությունը: Իսկ ինչի՞ մասին են խոսում պերճախոս թվերը: Միայն պայմանագիրն ստորագրված տարում Թուրքիան Խորհրդային Ռուսաստանից ստացավ 33 275 հրացան, 5 800 000 փամփուշտ, 327 գնդացի, 58 հրանոթ, շուրջ 130 հազար արկ, 1500 սուսեր, 20000 հակազագ, ծովային երկու ուժակոծիչ և այլ զենքեր: Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. Թուրքիային տվեց 6,5 մլն ռուբլի՝ ոսկով<sup>18</sup>: Սրանք թվեր են, որոնք ինքնին հաստատում են Ռուսաստանի «թույլ» լինելու մասին արտաքին գործերի ժողկոմի բացահայտ սուտը: Վերստին ցանկանում ենք ընդգծել, որ 1921 թ. մոսկովյան պայմանագիրը քեմալականների ակնառու հաղթանակն էր, քանզի, Առաջին աշխարհամարտից դուրս գալով որպես պարտված պետություն, քեմալականները կարողացան ոչ միայն Սևրի պայմանագիրը չեղյալ հայտարարել, պահպանել Թուրքիան տարածքային անդամահատումից, այլև տեր դառնալ Օսմանյան կայսրությանը երբևէ չպատկանած, բայց ազրեսիայի միջոցով զավթած նոր տարածքների: Ճշմարտությունը մեկն է՝ 1920-1921 թթ. խորհրդա-թուրքական սրտագին մերձեցումը քաղաքական-դիվանագիտական անվայելուչ, անբարոյական մի գործարք էր, որ Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունն իրականացրեց այնքան չարչրկված Հայկական հարցի շուրջ:

<sup>17</sup> Иголкин А. Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет (Պատմաբանափրական հանդես, 2000, N 1, էջ 7).

<sup>18</sup> Документы внешней политики СССР, т. III, М., 1959, с. 675.

Տարաբախտաբար Խորհրդային Ռուսաստանի և այսօրվա Ռուսաստանի Դաշնության հայկական քաղաքականության միջև չկա կամ գրեթե չկա էական տարբերություն: Հենց այդ են վկայում վերջերս (մարտի 16-ին) պաշտոնական այցով Ռուսաստան ժամանած Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի և Ռուսաստանի Դաշնության նախագահ Դ. Մեդվեդևի բանակցությունները, երբ կողմերը փաստեցին, որ ռուս-թուրքական հարաբերությունները բարձրացել են ռազմավարական գործընկերության մակարդակի: Հարկ է նշել, որ Ռ. Էրդողանի այցի ժամկետը պատահական չէր ընտրվել, ուղիղ 90 տարի առաջ խորհրդա-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի ստորագրման օրը: Էրդողանը Մեդվեդևին է նվիրում պայմանագրի պատճենն ու այդ կապակցությամբ դրոշմանիշը: Արարողության ժամանակ Թուրքիայի վարչապետն ասում է. «1921 թ. Խորհրդային Ռուսաստանը ճանաչել և երաշխավորել է մեր արևելյան սահմանների անխախտությունը: Այդ պայմանագրով դրվեց մեր բարեկամության ու գործընկերության հիմքը: Այն միավորեց մեր երկու ժողովուրդներին և հիմք ծառայեց մեր ընդհանուր հայացքների համար»<sup>19</sup>:

Ընդհանրապես պատմաքննական հայացքի ներքո առնելով անցյալի դասերը՝ դյուրին է նկատել, որ լայն, ռազմավարական իմաստով, Օսմանյան կայսրությունն ավանդաբար եղել է Ռուսաստանի հիմնական հակառակորդը Հարավկովկասյան և Միջինարևելյան տարածաշրջաններում: Մակայն, ցավոք, եղել են նաև մերձեցման մարտավարական ժամանակներ: Այդպիսին էին 1920-ական թվականները: Նման պահ է նաև արդի ժամանակաշրջանը, երբ դարձյալ հանուն շահի տեղի է ունենում ռուս-թուրքական «բարեկամության և գործընկերության» սերտացում, որը շրջանցում է «ռազմավարական դաշնակցի» կարծիքը: Ո՞րն է պատմության դասերի արդիական խորհուրդը: Այդ դասերը հրամայաբար պահանջում են, որ հայ հասարակական-քաղաքական միտքը չպետք է տրվի պատրանքների: Նա չունի ո՛չ հիմք, ո՛չ էլ իրավունք ազգի «փրկությունը» և «անվտանգությունը» դիվանագիտորեն կապելու աշխարհի այս կամ այն «մեծ» պետության հետ, թեկուզ այն «գերտերություն» հորջորջվի: Պատմության դասերը հրամայաբար թելադրում են՝ գերակա համարել «Հայ ժողովրդի անվտանգությունը նրա հավաքական ուժի և հզոր պետականության մեջ է» կարգախոսը և անշեղ առաջնորդվել այդ կարգախոսով:

<sup>19</sup> Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնական կայք, 16.III.2011 kremlin.ru

**ПОДЛИННАЯ СУТЬ СОВЕТСКО-ТУРЕЦКОГО  
МОСКОВСКОГО ДОГОВОРА ОТ 16 МАРТА 1921 Г.**

САРУХАРЯН Н. В.

**Резюме**

Московский советско-турецкий договор “о дружбе и братстве”, заключенный 16 марта 1921 г., был подписан в период, когда руководство Советской России всячески поддерживало кемалистскую Турцию в ее так называемой антиимпериалистической борьбе, игнорируя захватнические намерения кемалистов в отношении Армении. Согласно договору, к Турции отходили Карсская область и Сурмалинский уезд. От Армении отделялись и в качестве автономной территории передавались Азербайджану Нахичеванской уезд, большая часть Шарур-Даралагязского и небольшая часть Ереванского уездов. Договор по сути носил волюнтаристский характер, поскольку договаривающиеся стороны решали судьбу земель третьей – суверенной стороны, т. е. Армении. Именно в этом и заключалась антиармянская суть договора, который не потерял силу по сей день.